ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ
(Սան-Ստեֆանո, Բեռլին... Ստամբուլ)

Վ.Ռ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Նոր հազարամյակի սկիզբը հայ ժողովրդին կանգնեցրել է նոր փորձության շեմին: Հիրավի, գժվարությամբ է ձեռք բերվում անկախությունը, սակայն տասնապատիկ դժվար է պաշտպանել այն թշնամիների և, առավել ևս, կործեցյալ բարեկամների ոտնձգություններից: Քաղաքականության մեջ չկան մշտական բարեկամներ և թշնամիներ, կան մշտական շահեր: Անգլիացի քաղաքական գործչի, իսկապես, իմաստուն այս միտքը, որն, անշուշտ, դասական դիվանագիտության հիմնադրույթներից մեկն է, այսօր առավել քան արդիական է հայ ժողովրդի գոյատևման գործընթացի հերթական ոլորապտույտն ըմբռնելու համար: Ինչ անել. հետևելով պատմական փորձին և մեր նախնիների պատգամներին՝ շարունակել «բարեկամական» կապերը մեր հյուսիսային հարևանի հետ, հերքելով թուրքերի հետ որևէ դրացիական կապի միտքն անդամ, թե՞, վերանայելով մեր ավանդական մոտեցումները, մոռանալով մեր պատմական անցյալն ու «հարուստ» քաղաքական փորձը, ինչպես նաև պանթուրանիզմի աշխարհակալ նկրտումները (Ադրբեջանի նախկին նախագահ Աբուլֆազ Էլչիբեյն, օրինակ, գտնում է, որ Արցախը, ոչ միայն Ադրբեջանի, այլև ողջ աշխարհի ադրբեջանցիների և ընդհանրապես բոլոր թուրքալեզու ժողովուրդների խնդիրն է), փորձել «լեզու գտնել» մեր դարավոր թշնամու հետ, որը մինչև այսօր, մեծ տերությունների հետ միասին և հավասարաչափ, պատասխանատու է, արժանի՝ անարգանքի ու հայերի երիցս անեծքին՝ որպես արդյունք դարիս սահմռկեցուցիչ հանցագործության, հայկական Մեծ եղեռնի: Սա ողբ չէ և ոչ էլ փորձ՝ աշխարհը մեր դեմ տրամադրելու: Սա փաստ է, որը չի կարելի անտեսել թե ռուսադավ, թե թուրքադավ, թե ամերիկամետ և թե եվրոպամետ քաղաքականություն վարելիս:

Վտանգավոր ու, թերևս, հանցագործության հավասար երևույթ է մի շարք հայ քաղաքական գործիչների և դիվանագետների այն միտքը, թե ժամանակն է մոռանալ այն ամենն, ինչ տեղի է ունեցել մի քանի տասնյակ տարի առաջ և, հետևելով եվրոպական չափանիշներին, առաջնային համարելով տարածաշրջանի ընդհանուր շահերը՝ հասնել հայ-թուրքական հարաբերությունների շուտափույթ ջերմացմանը:

Պետք է նշել, որ բնականոն հարաբերությունները Թուրքիայի հետ ցանկալի և, անշուշտ, հնարավոր են, սակայն ոչ ի կորուստ հայ ժողովրդի պատմական և ներկայիս շահերի: Անտարակույս, չի կարելի մոռանալ ոչ միայն այն փաստերի և դեպքերի մասին, որոնք տեղի են ունեցել մի քանի տասնյակ տարի առաջ, այլև անթույլատրելի է չհիշել մեր հազարամյա պատմությունը ևս, չքաղելով նրանից համապատասխան դասեր: Թուրքերի հետ պետք է ունենալ հարաբերություններ, սակայն շատ զգույշ և որոշակի վերապահումներով: Անշուշտ, փոխվում են ժամանակները, սակայն չի փոխվում ազգային հոգեբանությունը և, նույնիսկ այսօր, կարելի է ամեն ինչ կորցնել մի քանի ժամվա ընթացքում, եթե ուղղափառ թուրքին հանկարծ թվա, որ քո ունեցվածքն արդեն վտանգում է նրա բարեկեցությունը:

Չպետք է մոռանալ նաև, որ Արևելքը Եվրոպա չէ, որ եվրոպական տարածաշրջանային շահերը շատ են տարբերվում ասիականից, որ հայը, թուրքը և եվրոպացին չունեն նույն բարոյահոգեբանական նկարագիրը: Այս առումով, զանգվածային եվրոպականացման փորձն, իր հերթին, հղի է մի շարք բարդ, գուցե նաև վտանգավոր, երևույթներով, որոնցից մեկը եղավ եվրոպական ընտանիքին անդամագրվելու երկար և դժվարին ուղին: Այս հարցին նույնպես պետք է մոտենալ շատ զգույշ և առանց ավելորդ շտապողականության՝ չմոռանալով նաև այն մասին, որ հայերը քրիստոնեական Արևելքի քաղաքակրթության հիմնական կրողներից են, և Հայկական հարցի լուծման ճանապարհին այս երևույթի անտեսումը, առնվազն, անթույլատրելի է:

Հայկական հարցը, որն առաջին անգամ իրավապայմանագրային կարգավիճակ ստացավ, դառնալով միջազգային իրավունքի խնդրո առարկա, դեռևս 1877 - 1878թթ. ռուս-թուրքական պատերազմից, Սան-Ստեֆանոյի համաժողովից և Բեռլինի գագաթաժողովից հետո, պատմական իր հերթական փուլը մտավ Երրորդ հանրապետության հռչակման և Արցախի հիմնահարցի բարձրացման հետ միասին: Վերջնական նպատակ ունենալով ողջ հայ ժողովրդի համահավաք կենտրոնացումը և նրա պետականության վերականգնումը պատմական Հայաստանի ամբողջ տարածքում՝ ներկայումս Հայկական հարցը հանդես է գալիս այդ տարածքի մի մասի՝ Արցախի հիմնախնդրի լուծման ձևով, որը, սակայն, բացառում է հարցի հիմնական գաղափարի անտեսումը:

Արցախի հիմնահարցի լուծման գործընթացի քաղաքական և դիվանագիտական, քսաներորդ հարյուրամյակում՝ վերջին ներկայացման վարագույրն իջեցվեց 1999թ. նոյեմբերին՝ Ստամբուլում կայացած գագաթաժողովում: Ինչպես արդեն հայտարարել էին Հայաստանի Հանրապետության նախագահը և արտաքին գործերի նախարարը, գագաթաժողովից մի քանի օր առաջ, Ստամբուլում որևէ փաստաթուղթ, նվիրված Արցախի հիմնախնդրին, չստորագրվեց: Հույսը, որը փայփայում էին այդ հարցի վերաբերյալ «ցավողները», չարդարացավ: Անհիմն է այն կարծիքը, որ եթե չլիներն չարաբաստիկ կրակոցները Ազգային ժողովի նիստերի դահլիճում, ապա մեծ տերությունները, հաշվի առնելով թե հայերի և թե ադրբեջանցիների ցանկությունը՝ այսուհետ ապրել համաձայնության և խաղաղության պայմաններում, հնարավոր է, որ գագաթաժողովի որոշումների շրջանակներում, «ինչ-որ մի» փաստաթուղթ ստորագրեին, որը հետագա բանակցությունների կռվան կհանդիսանար:

Նախ և առաջ, բոլորովին էլ համոզիչ չէ այն վարկածը, թե մեծ տերությունները շատ «էին զայրացել ժողովրդավարության դեմ» կատարված այդ սարսափելի ոճրագործությունից, և որ այդ էր Հայկական հարցի քննարկման ներկա փուլում ինչ-որ դրական արդյունքի հասնելու հնարավորության նկատմամբ նրանց՝ ավելի քան սառը վերաբերմունքի պատճառը: Բոլորին հայտնի է, որ մեծ տերությունների մեծությունն այն է, որ նրանք, միշտ և ամենուրեք, գործում են այնպես, ինչպես հարմար են գտնում՝ բոլորովին չմտահոգվելով, որ հաճախ իրենց գործունեությամբ հակասում են իրենց իսկ հռչակած ժողովրդավարության և մարդասիրության սկզբունքներին: Ելնելով վերը նշվածից՝ գուցե պետք է համաձայնվել, որ վերոհիշյալն առիթ էր և հնարավորություն՝ գործընթացը ձեռնտու հունի մեջ պահել ցանկացող որոշ շահագրգռված շրջանակների

համար, իրենց նպատակներն իրականացնելու ճանապարհին: Այս պարագայում շատ զարմանալի է թվում հակամարտող կողմերի լավատեսությունը և, որն առավել հետաքրքիր է՝ երկուստեք համոզվածությունը՝ յուրաքանչյուրն իր հաղթանակի մեջ:

Հայկական կողմը հայտարարում է, որ Ստամբուլում հասել է մեծ հաջողության, քանզի գագաթաժողովի հռչակագրում, որտեղ խոսվում է Արցախի հիմնախնդրի լուծման ճանապարհների մասին, չի նշվում Ադրբեջանի տարածքային ամբողջականության փաստը, ի տարբերություն Լիսաբոնի, որտեղ այդ հարցը նշված էր որպես հակամարտության կարգավորման երեք սկզբունքներից մեկը: Սակայն առավել քան զարմանալի է, որ չի նշվում այն փաստը, թե ինչու Ստամբուլում, կրկին ի տարբերություն Լիսաբոնի, չկա «ինքնորոշման հիման վրա Լեռնային Ղարաբաղի իրավական կարգավիճակի սահմանում», թեկուզ և Ադրբեջանի կազմում, որին հայերը, բնականաբար, չպետք է համաձայնվեն, սակայն ինքնորոշման սկզբունքը հանդիսանում է և պիտի հանդիսանա Արցախի հիմնահարցի լուծման գրավականը:

Ակամա անդրադարձը Հայկական հարցի լուծման գործընթացի պատմությանը մեզ հիշեցնում է պատմական մի փաստ՝ մեկ անգամ ևս ընդգծելով, թե որքան կարևոր է չմոռանալ պատմության դասերը: Սան-Ստեֆանոյի համաժողովից հետո, ինչպես նշվեց վերևում, Հայկական հարցը դարձավ միջազգային իրավունքի խնդրո առարկա՝ հանգրվանելով այնտեղ ստորագրված փաստաթղթում՝ որպես պայմանագրի 16-րդ հոդված, որտեղ ասվում էր, որ Թուրքիան պարտավորվում է կատարել համապատասխան բարեփոխումներ Հայաստանի տարածքում: Սակայն շատ շուտով, արդեն Բեռլինի գագաթաժողովում, Հայկական հարցը, բախտի քմահաճույքով դառնալով այնտեղ ստորագրված փաստաթղթի թիվ 61 հոդվածը, ենթարկվեց խմբագրման, որի հետևանքով վերացավ Հայաստան բառը, և այն փոխարինվեց հայերով բնակեցված տարածքներ արտահայտությամբ: Առաջին հայացքից աննշան թվացող այս փոփոխությունը թուրքերին թույլ տվեց հետագայում բացառել հայերի՝ բնիկ լինելու և, ընդհանրապես, գոյության փաստն այդ տարածքներում՝ փորձելով գործնականորեն ապահովել այդ տեսակետի ճշմարիտ լինելը՝ 1915 - 1923թթ. ընթացքում:

Սակայն վերադառնանք Ստամբուլ: Հայաստանի Հանրապետության նախագահ Ռ.Քոչարյանի ելույթից պարզվում է, «որ ժամանակն է մշակելու Հարավային Կովկասի տարածաշրջանային անվտանգության համակարգ, որը կդառնա համաեվրոպական անվտանգության կառույցի մասը՝ ներառելով իր մեջ բոլոր շահագրգիռ կողմերը, և առաջին հերթին՝ տարածաշրջանի երկրները»:

Այս, առավել քան հետաքրքիր և միաժամանակ սթափեցնող հայտարարությունը, բնական է, որ անմասն չմնաց արևմտյան լրատվական միջոցների ուշադրությունից, որոնք այն գնահատեցին և ողջունեցին որպես հայերի հակառուսական կողմնորոշման ապացույց, քանզի Ադրբեջանի նախագահ Հ.Ալիևը ևս, ըստ Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարար Նաիրա Մելքումյանի, ճիշտ չըմբռնելով Ռ.Քոչարյանի միտքը, ողջունել է վերջինիս նախաձեռնությունը, առաջարկելով ստորագրել համաձայնագիր՝ Անդրկովկասում համագործակցության և անվտանգության վերաբերյալ: Թերևս ցանկանալով շակել Հ.Ալիևի «սխալը»՝ տիկին Մելքումյանը արեց առավել ցնցող մի հայտարարություն. «Ենթադրվում է

ստեղծել անվտանգության համակարգ Մեծ Կովկասի տարածաշրջանում, քանզի վերջինս չի կարելի բաժանել միայն Հյուսիսային և Հարավային մասերի, որովհետև այն հանդիսանում է միմյանց վրա փոխազդելու կենդանի համակարգ՝ տարածաշրջանի բոլոր երկրների համար»: Զափազանց հետաքրքիր է հնչում վերոհիշյալ միտքը՝ Կովկասի ամբողջականության վերաբերյալ: Սակայն տիկին նախարարը, դժբախտաբար, չի հստակեցնում իր այդ գաղափարը, ըստ երևույթին, ելնելով կանացի նկարագրի այն բնութագրական կողմից, ըստ որի, կինը միշտ էլ պետք է մնա առեղծվածային՝ շրջապատի համար:

Վերադառնալով խնդրին՝ տեղին է թվում հիշել Իգոր Մուրադյանի միտքն այն մասին, որ «Կովկասն իրականում անջատ միավորներ են, որոնք, ժամանակի ընթացքում, միանում կամ անջատվում են՝ տարածաշրջանում խոշոր երկրների (իմա – մեծ տերություններ – Վ.Հ.) ազդեցությունների հետևանքով»: Սա հարցի քաղաքական կողմն է: Առավել պարզ է դառնում Կովկասի միասնականության հայացակետի սնանկությունը, երբ հարցը դիտվում է տարածաաշխարհագրական տեսանկյունից: Կովկասյան լեռները, ի սկզբանե, պատմականորեն եղել են սահմանազատ գիծ՝ Անդրկովկասի տարածքում եղած պետությունների և ներկայիս Հյուսիսային Կովկասի տարածքների միջև, այսինքն՝ հանդիսացել են ջրբաժան՝ տարբեր քաղաքակրթությունների համար: Եվ այսօր խոսել Կովկասի՝ ինչ-որ մի ձևով միասնական լինելու մասին, մեղմ ասած, սխալ է և վտանգավոր, քանզի լիովին հակասում է հայ ժողովրդի շահերին և ռազմավարական աններելի սխալ է Հայկական հարցի լուծման ճանապարհին:

Զարմանալի է, որ կովկասյան ընդհանուր «բնակարան» ունենալ ցանկացող հայ գործիչները մոռանում են կամ գուցե չգիտեն, որ նախ և առաջ, և սա անչափ կարևոր հանգամանք է, հայերը կովկասյան ժողովուրդ չեն և ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքը ընդամենը պատմական Հայաստանի հյուսիսային կամ լեռնային մասն է: Զունենալով որևէ ազգային, բարոյահոգեբանական և լեզվական (հնդեվրոպական լեզվարնտանիքում հայոց լեզուն առանձին ճյուղ է՝ չմտնելով որևէ այլ խմբի մեջ) ընդհանրություն կովկասյան ժողովուրդների հետ և ելնելով ներկայիս քաղաքական ու տարածաշրջանային իրավիճակից՝ պետք է փաստել, որ այսօր հայ ժողովրդի շահերին չեն համապատասխանում համակովկասյան որևէ կառույցին անդամակցելը և, առավել ևս, այդպիսի կառույցի ստեղծման նախաձեռնություն հանդես բերելը: Ներկայումս, և ապագայում նույնպես, քանի դեռ չի լուծվել Հայկական հարցն ամբողջապես, միայն երկկողմանի հարաբերությունների համակարգը կարող է ապահովել հայ ժողովրդի շահերն ու անվտանգությունը: Այս առումով, Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարի առաջարկը՝ Մեծ Կովկասի տարածքում ընդհանուր անվտանգության համակարգ ստեղծելու մասին չի կարող նպաստել Հայկական հարցի լուծման գործընթացին:

Հասկանալի է, որ պատմության ընթացքի յուրաքանչյուր փուլում (այդ մասին արդեն նշվեց վերևում) Հայկական հարցը հանդես է գալիս տարբեր կարգավիճակներով, և եթե այսօր այն ձևակերպվում է նաև որպես Արցախի հիմնախնդիր, ապա այդ թույլ չի տալիս անտեսել հայ ժողովրդի ընդհանուր ռազմավարական շահերը, քանզի դա պարունակում է մեծ վտանգ՝ վերջնական նպատակին հասնելու ճանապարհին: Այսօր փորձել համակովկասյան կառույց ստեղծել՝ նշանակում է սահմանափակել

Հայաստանի հնարավորությունները հետագա քաղաքական զորաշարժերի ընթացքում: Կովկասյան պետություններից և ոչ մեկի հետ Հայաստանի Հանրապետությունն այսօր չունի ընդհանուր քաղաքական շահեր՝ չխոսելով արդեն այն մասին, որ հայերն ունեն դեռևս չլուծված խնդիրներ՝ տարածաշրջանի համընդհանուր խնդիրների համակարգում:

Տեղի ունեցող երևույթների և առկա փաստերի նկատմամբ ցուցաբերելով սթափ մոտեցում պետք է հասկանալ, որ եզրակացություններ անելիս չի կարելի հանդես բերել շտապողականություն և մտածել, թե յուրաքանչյուր նախաձեռնություն որքանով է համապատասխանում հայ ժողովրդի ընդհանուր շահերին:

Լեռլինի գագաթաժողովից հետո, թագավոր Ալեքսանդրին ուղարկած իր երկտողում, կանցլեր Գորչակովը նշել է, որ այդ գագաթաժողովն իր խայտառակությունն էր: «Իմը եւ», - պատասխանել է ցարը:

Պատմության հետագա ընթացքը ցույց կտա, թե ում խայտառակությունն էր Ստամբուլը, և որքան էին համապատասխանում այնտեղ ընդունված որոշումները Հայկական հարցի լուծման գործընթացին:

АРМЯНСКИЙ ВОПРОС (САН-СТЕФАНО, БЕРЛИН... СТАМБУЛ)

В.Р.ОГАНЕСЯН

Резюме

На разных этапах истории Армянский вопрос приобретал новый статус, и если сегодня он рассматривается в качестве Арцахской проблемы, то это не дает нам права игнорировать общие стратегические интересы армянского народа, т.к. это представляет собой большую опасность на пути достижения конечной цели. Попытка создать общекавказскую структуру на сегодняшний день означает ограничить возможности Армении в процессе будущих политических маневров. Республика Армения не имеет общих политических интересов ни с одним из кавказских государств, не говоря уж о том, что в Армении накопилась масса неразрешенных проблем, в том числе проблема координации общих территориальных вопросов.